ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2026թ N---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության ստորև նշված աշխատակիցներին լինելու Երևան քաղաքի ավագանու ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վարչական, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարաններում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում, կատարելու Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով նշված բոլոր դատավարական գործողությունները.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյան.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյան.

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Լիլիթ Մարտիրոսյան.

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Զավեն Սմբատյան.

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի պետ Ելիզավետա Արզիկյան.

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական բողոքների ուսումնասիրության բաժնի պետ Հրանուշ Ներսիսյան.

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Նարիմանյան.

8) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Լաուրա Հարությունյան.

9) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ Սյուզաննա Արմենակյան.

10) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ Նադեժդա Մուրադյան.

11) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լուսինե Խաչատրյան.

12) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական բողոքների ուսումնասիրության բաժնի առաջատար մասնագետ Աննա Բաղալյան:

2. Լիազորագիրը տրվում է մեկ տարի ժամկետով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան համայնքի ձևավորման պահից ի վեր Երևան համայնքի ավագանու որոշումները վիճարկելու վերաբերյալ առկա են եղել մի քանի տասնյակ գործեր:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքապետը ներկայացնում է Երևանը՝ որպես համայնք, ավագանին և քաղաքապետարանը այլ անձանց և մարմինների հետ հարաբերություններում:

Տարիներ շարունակ հիմք ընդունելով վերը նշված հոդվածը՝ Երևանի քաղաքապետի կողմից տրված լիազորագրի հիման վրա Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավասու ստորաբաժանումների աշխատակիցները ներկայացրել են Երևան քաղաքի ավագանու շահերը ՀՀ դատական տարբեր ատյաններում և վերջիններիս լիազորությունները մշտապես ճանաչվել են դատական ատյանների կողմից:

Երևան քաղաքի ավագանու դեմ 2024 և 2025 թվականների ընթացքում ներկայացված հայցադիմումների հիման վրա քննվող վարչական գործերի շրջանակներում որոշ դատական ատյաններ առանձին գործերի քննության շրջանակներում չեն ճանաչել Երևանի քաղաքապետի կողմից տրված լիազորագրի հիման վրա աշխատակազմի իրավասու ստորաբաժանումների աշխատակիցների լիազորությունները՝ Երևան քաղաքի ավագանու շահերը տվյալ դատական ատյաններում ներկայացնելու համար:

Նշված գործերի շրջանակներում դատական ատյանները նշել են, որ Երևան քաղաքի ավագանու շահերը ՀՀ դատական ատյաններում Երևանի քաղաքապետարանի իրավասու ստորաբաժանումների կողմից կարող է ներկայացվել միայն Երևան քաղաքի ավագանու կողմից տրված լիազորությունները հավաստող փաստաթղթի հիման վրա:

Հիմք ընդունելով վերը նշվածը Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի N 385-Ա որոշմամբ Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար ընդունվել է լիազորություններ վերապահելու մասին որոշումը, լիազորագիրը տրվել է մեկ տարի ժամկետով:

Հաշվի առնելով, որ լիազորագրի ժամկետը սպառվում է և ելնելով Երևան համայնքի շահերը ՀՀ դատական ատյաններում պատշաճ կարգով ներկայացնելու անհրաժեշտությունից հարկ է առաջացել ընդունել Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանի

աշխատակազմի իրավասու ստորաբաժանումների աշխատակիցները հնարավորություն կունենան ներկայացնել Երևան քաղաքի ավագանու շահերը՝ ՀՀ դատական ատյաններում Երևան քաղաքի ավագանու դեմ քննվող դատական գործերի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ